



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 17 » Հունիսի 2024թ.
ք. Արմավիր

N ՄՈ/29 -Ա

«ԱՐՄԱՎԻՐԻ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հունվարի 11-ի N ՄՈ/08-Ա և N ՄՈ/11-Ա որոշումները, «Արմավիրի N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

- Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
- Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Արմավիրի N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լատուրա Պատուրյանին (համաձայնությամբ):
- Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

[Handwritten signature]

2024-01-17 16:57:28 GMT+4
Հավաստված է էԷՍԸՊ-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2024 թվականի հունվարի 17-ի

N ՄՈ/ 29 -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Անդամներ՝

Ն. Ալավերդյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Զ. Եղոյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Արմեն Բաղդասարյան -

«Արմավիրի N 3 հիմնական դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Շողակաթ Թազամբյան -

«Արմավիրի N 3 հիմնական դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
պաշտոնակատար



Недействительная подпись

VERIFIED: OCSP 16.01.2024 15:30:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝